նաւանդ տեղային քրիստոնեաներին: Եւ մասնաւորապէս իր պաշտպանութեան ճառը ջալալիների վրայ, իբրեւ փաստ, յիշեց եւ այն, թէ մի քանի շաբաթ առաջ Ս. Տիրամօր վանքի տօնախմբութիւնն էր, եւ ինքը բեկը (այնտեղ ներկայ գտնողը) անձամբ գնացած էր այնտեղ ուխտաւորների մէջ կարգ պահպանելու համար: Տօնախմբութիւնը վերջանալուց յետոյ դարձեալ բէկի մարդիկն էին, որ առաջնորդում էին ուխտաւորներին դէպի իրանց երկրները, որպէսզի պահպանեն նրանց ճանապարհների վտանգներից:

Ես բոլորովին զարմացած մնացի: Կարծես, մի ներքին սեւ թել կապում էր այդ բոլոր մարդկանց սրտերը միմեանց հետ: Դրանք ամենայայտնի չարագործութիւնները բարի ձեւի մէջ ամփոփելով վարպետութիւնն ունէին: Եթէ ես եւ Ասլանը Ս. Տիրամօր վանքի տօնախմբութեան ժամանակ մեր աչքով տեսած չլինէինք, որ քուրդ բեկը եկել էր այնտեղ յափշտակելու տօնախմբութիւնից գոյացած եկամտի մի մասը, եթէ մեզ յայտնի չլինէր, որ նրա մարդիկը մեծ վճարներ էին ստանում ուխտաւորներից ճանապարհների վտանգներից պահպանելու համար, բայց միեւնոյն ժամանակ, նրանց անյայտ ընկերները, նոյնիսկ պահապանների գիտութեամբ, յարձակւում էին եւ կողոպտում էին նրանց, եթէ այդ բոլորը մեզ յայտնի չլինէր, գուցէ սրբազանի վկայութեանը մեծ նշանակութիւն տայինք: Բայց Ասլանը լռեց, եւ յայտնի պատճառներից ստիպած, ոչինչ չպատասխանեց:

Հետաքրքիրն այն էր, թէ ի՞նչն էր առիթ տալիս սրբազանին քրդի բարբարոսութիւններին պաշտպան հանդիսանալ: Նա բարեկամական մեծ կապեր ունէր համարեա բոլոր քուրդ ցեղապետների հետ: Այդ յարաբերութիւնները պահպանում էր իր ազդեցութիւնը բարձրացնելու համար: Իր ձեռքում ունենալով երկրի խոշոր գազաններին, նա այն աստիճան նշանակութիւն էր ստացել, որ ոչ միայն հասարակ մարդիկ, այլ մինչեւ անգամ փաշան նրանից ակնածում էր: Բայց միթէ՞ այդ ազդեցութիւնը աւելի բարձր նպատակների համար չէր կարելի գործ դնել: Ասլանը մի անգամ ինձ ասում էր. «այդ մարդը շատ պիտանի կարող էր լինել, եթէ իր ուժերը դէպի չարը գործ չդներէ: Օրինակներ շատ էին պատահել, երբ քուրդ բեկերից մէկը որեւիցէ յանցանքի համար կալանաւորւում էր, կամ աքսորւում էր, նա իր գրպանից մեծ գումարներ էր ծախսում եւ ազատում էր չարագործին: Ինչի՞ համար: Որպէսզի նրան իր ձեռքում մի լաւ գործիք ունենայ:

Կրկին խօսք եղաւ Ասլանի միւս օր ճանապարհ ընկնելու մասին եւ առաջնորդը, օգուտ քաղելով դրանից, փոխեց խօսակցութեան առարկան, ասելով.